

Luys Lnyu®



ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ
ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Proj

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
2. 2021-2023թթ. ՄԺԾԾ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ՄԺԾԾ-ՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ.....	2
3. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ.....	3
4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	6
5. ԱՄՓՈՓՈՒՄ	9

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր տարի կառավարությունը ներկայացնում է առաջիկա երեք տարիների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (ՄԺԾԾ), որն իրենից ներկայացնում է կառավարության հարկաբյուջետային և ծախսային քաղաքականության հիմնական ուղղությունները, նպատակները և սկզբունքներն արտացոլող կարևոր փաստաթուղթ: ՄԺԾԾ-ի մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել կառավարության համար կառավարելու պետական հատվածի ֆինանսական ռեսուրսներն իր միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայություններին համապատասխան: Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ծառայում է հիմք՝ պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների համար¹:

ՄԺԾԾ փաստաթուղթը հանդիսանում է նաև տնտեսավարողների հետ կառավարության հաղորդակցության հիմնական գործիքներից մեկը, քանի որ արտացոլում է կառավարության մտադրություններն առաջիկա տարիների քաղաքականության վերաբերյալ՝ ձևավորելով համապատասխան սպասումներ տնտեսությունում: Այս նպատակով ՄԺԾԾ-ի օգտագործումը հատկապես կարևորվում է ճգնաժամային ժամանակահատվածներում, ինչպիսին է 2020 թվականը, քանի որ դրանով հնարավոր է դրական ազդակներ հաղորդել տնտեսավարողներին, ցույց տալ, որ կառավարությունը տիրապետում է իրավիճակին և ունի ճգնաժամի արդյունավետ կառավարման գործիքակազմ և ռեսուրսներ՝ այդպիսով նվազեցնելով առկա անորոշությունները:

Սակայն, կառավարությունը կարծես թե չցանկացավ բարձրացնել տնտեսավարողների հետ հաղորդակցության մակարդակը, 2021-2023թթ. ՄԺԾԾ-ն ընդունեց հեռավար կարգով՝ առանց կառավարության նիստում քննարկելու և առանց տնտեսությանը համապատասխան ազդակները հաղորդելու:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է ուսումնասիրել ներկայացված փաստաթուղթը՝ հասկանալու համար, թե ինչպես է կառավարությունը տեսնում իրադարձությունների հետագա զարգացման ընթացքը, տնտեսության վերականգնման տեմպը, և ինչպիսի քաղաքականություն է նախատեսում իրականացնել համավարակի բացասական ազդեցությունները մեղմելու և հետագա տարիներին տնտեսական վերականգնման տեմպն արագացնելու համար:

Այսպիսով, սույն վերլուծությունում ուսումնասիրվել են 2021-2023թթ. ՄԺԾԾ-ի կառուցվածքը, ծրագրի հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական

¹ 1997թ. հունիսի 24-ին ընդունված «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-137, 21-րդ հոդվածի 2-րդ կետ:

կանխատեսումները, որոնք արտացոլում են կառավարության պատկերացումը տնտեսական իրավիճակի հետագա զարգացումների վերաբերյալ, ինչպես նաև հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները, որից պարզ կդառնա, թե ինչպիսի քաղաքականություն է իրականացնելու կառավարությունը ճգնաժամին հակազդելու և տնտեսության արագ վերականգնումն ապահովելու համար:

2. 2021-2023թթ. ՄԺԾԾ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ՄԺԾԾ-ՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ

2021-2023թթ. ՄԺԾԾ փաստաթուղթը փոքր-ինչ տարբերվում է նախորդներից: Տեղի են ունեցել որոշ բովանդակային և տեխնիկական բարելավումներ, որոնք մեծացրել են շեշտադրումը հարկաբյուջետային քաղաքականության վրա՝ բարելավելով որպես հաղորդակցության գործիք փաստաթղթի կիրառելիությունը: Մասնավորապես.

1. ՄԺԾԾ-ի առաջին՝ «Հարկաբյուջետային քաղաքականությունը» մասում մակրոտնտեսական զարգացումների և կանխատեսումների նկարագրությունը առանձնացվել է հարկաբյուջետային քաղաքականության հատվածից՝ մեծացնելով և ավելի մեծ տեղ հատկացնելով հարկաբյուջետային քաղաքականության նկարագրությանը, որը թերևս, ամենակարևորն է, քանի որ հենց այդ մասում է նկարագրված կառավարության գործողությունների հիմնական ուղղությունները:
2. Ավելացել են կառավարության կանխատեսումների համեմատական աղյուսակներ, որոնք ցույց են տալիս նախկինում կանխատեսված ցուցանիշները և դրանց վերանայումները: Չնայած նրան, որ չի ներկայացվել կանխատեսումների վերանայումների պատճառները, այնուամենայնիվ սա կարող է համարվել դրական առաջընթաց:
3. 2021-2023 թվականների ՄԺԾԾ մակրոտնտեսական շրջանակի կանխատեսումները, առաջին անգամ, իրականացվել են DSGE² մոդելի կիրառմամբ, ինչը էական առաջընթաց է մակրոտնտեսական վերլուծությունների և կանխատեսումների գործընթացում: Նշենք, որ DSGE մոդելի կառուցման աշխատանքները սկսվել էին դեռևս 2017 թվականին:

² ՀՀ ՖՆ և ԱՄՀ համատեղ ջանքերով մշակվել է հարկաբյուջետային քաղաքականության ռազմավարության մոդելը՝ FPS DSGE (Fiscal Policy Strategy Dynamic Stochastic General Equilibrium), որն ամբողջությամբ միկրո հիմքերով փոքր բաց տնտեսության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդել է: DSGE մոդելների միջոցով հնարավոր է մոդելավորել ամբողջ տնտեսությունը և ուսումնասիրել տարբեր շուկերի ազդեցությունները միաժամանակ բոլոր մակրոտնտեսական ցուցանիշների վրա՝ հաշվի առնելով փոխադարձ և երկրորդային էֆեկտները:


4. Նախորդ տարիների ՄԺԾԾ-ների համեմատ, այս տարի ավելացել է նաև կառավարության պարտքի կայունության վերլուծությունը, որը նախանշում է առաջիկա հինգ տարիների ընթացքում ՀՀ կառավարության պարտքի հիմնական ռիսկերը:

3. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Ըստ ՄԺԾԾ-ի հիմքում դրված մակրոտնտեսական ցուցանիշների՝ 2020-ին սպասվում է ընդամենը 2.6% տնտեսական անկում, իսկ հաջորդ տարիներին բավականին արագ և բարձր տեմպերով վերականգնում: 2020-ի համար կանխատեսվող ցուցանիշը ցածր է ինչպես ՀՀ կենտրոնական բանկի, այնպես էլ անկախ տնտեսագետների կողմից հնչեցրած գնահատականներից: Բացի այդ, **հաշվի առնելով, որ հունվար-հունիս ամիսներին տնտեսական ակտիվության ցուցանիշը արդեն կազմել է -4.7%, կարող ենք նշել, որ կառավարության սպասումները չափազանց լավատեսական են:** Նախորդ տարվանից սկսած՝ ՄԺԾԾ-ի առաջին տարվա կանխատեսումները՝ այս դեպքում 2021թ., հանդիսանում են առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքի հիմքում դրվելիք ցուցանիշները: Հետևաբար, բավականին վտանգավոր կստացվի, եթե կառավարությունը 2021-ի բյուջեն կազմի 2020-ին՝ -2.6 և 2021-ին՝ 7.0 տոկոս տնտեսական աճերի ենթադրությամբ: Պատճառն այն է, որ այդ կերպ 2021-ի կանխատեսվող անվանական ՀՆԱ-ն կստացվի չափազանց բարձր, որի հիման վրա կկանխատեսվեն անիրատեսական հարկային եկամուտներ, որոնք իրենց հերթին կծանրաբեռնվեն ծախսերով: **Եթե կառավարության կանխատեսումները շեղվեն դեպի ներքև, ապա նախատեսված ծախսերը չեն կարող կատարվել՝** առաջացնելով ռիսկեր կառավարության քաղաքականության իրագործման տեսանկյունից:

2021-ի համար 7.0% և 2022-ի համար 6.4% կանխատեսվող տնտեսական աճի ցուցանիշները, զգալիորեն բարձր են նախորդ տարի կանխատեսված համապատասխանաբար 5.0% և 5.1% ցուցանիշներից (տե՛ս Գծապատկեր 1): Այսինքն՝ կառավարությունը սպասում է բավական արագ տնտեսական վերականգնում համաճարակից հետո:

Գծապատկեր 1. Տնտեսական աճի կանխատեսումների համեմատականը, %



Կանխատեսումների հիմքում ընկած է նաև այն ենթադրությունը, որ ՀՀ և գործընկեր երկրների տնտեսությունները «V-աձև» զարգացում են ունենալու՝ ամենամեծ անկումը գրանցելով 2020թ. երկրորդ եռամսյակում: Այս պարագայում կրկին կառավարության կանխատեսումները չափազանց լավատեսական են: Այսպիսի մոտեցումը համահունչ է մարտ-ապրիլ ամիսների պատկերացումներին, երբ սպասվում էր, որ համավարակը կմարի ամռան ամիսներին և 3-րդ եռամսյակից կսկսվի տնտեսական վերականգնումը: Սակայն, այժմ ակնհայտ է, որ համավարակը դեռևս չի դրսևորում անկման միտում, հետևաբար դրա ավարտի և տնտեսական վերականգնման արագությունը պետք է վերանայել:

Հարկ է նշել, որ ըստ ԱՄՀ-ի կողմից ընթացիկ տարվա ապրիլին կատարված կանխատեսումների³, թեև 2020-ին սպասվում է ավելի փոքր տնտեսական անկում՝ 1.5%, սակայն վերականգնումը սպասվում է ավելի դանդաղ՝ 2021-ին 4.8%-ի, իսկ 2022-2023 թթ. 4.5%-ի սահմաններում:

Աղյուսակ 1. 2021-2023թթ. ՄԺԾԾ հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ	2017	2018	2019	2020	2021	2022	2023
	փաստ.	փաստ.	փաստ.	սպասում	ծրագիր	կանխ.	կանխ.
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	5,564.5	6,017.0	6,569.0	6,505.1	7,143.0	7,853.5	8,582.5
Տնտեսական աճ, %	7.5	5.2	7.6	-2.6	7.0	6.4	5.1
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	2.1	2.8	1.5	1.7	2.7	3.4	4.0
Փևած (ժամանակաշրջանի վերջ), %	2.6	1.8	0.7	1.4	3.2	3.5	3.9
ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների, %							

³ <https://www.imf.org/en/Publications/CR/Issues/2020/05/22/Republic-of-Armenia-Second-Review-Under-the-Stand-By-Arrangement-Requests-for-Augmentation-49455>

Արդյունաբերություն	11.8	4.9	8.3	-5.0	10.5	9.0	5.1
Գյուղատնտեսություն	-5.1	-6.9	-2.6	0.0	2.0	2.5	3.0
Շինարարություն	2.8	0.6	3.7	1.0	4.0	4.0	4.5
Ծառայություններ	10.6	9.1	10.7	-2.1	7.1	6.5	5.6
Չուտ հարկեր	9.7	8.0	7.1	-5.7	7.5	6.5	5.0
ՀՆԱ ծախսային բաղադրիչների իրական աճերը, %							
Վերջնական սպառում	10.5	6.0	10.6	-0.5	5.3	4.9	4.4
Պետական	-2.1	-3.0	12.5	9.3	1.0	4.2	13.5
Մասնավոր	12.7	7.4	10.3	-2.0	6.0	5.0	3.0
Հիմնական միջոցներում ներդրումներ ⁴	9.7	4.8	4.4	-1.1	7.2	7.9	5.6
Պետական	9.9	3.4	38.9	13.3	9.5	13.6	7.4
Մասնավոր	9.7	5.1	-2.2	-5.0	6.5	6.0	5.0
Արտահանում	18.7	2.9	13.2	-14.0	15.9	10.6	9.1
Ներմուծում	24.6	12.9	7.8	-9.0	7.8	6.7	4.1
Արտաքին հատված							
Ընթացիկ հաշիվ, % ՀՆԱ-ում	-1.5	-6.9	-7.2	-9.7	-7.3	-6.3	-5.6
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ, % ՀՆԱ-ում	-10.8	-13.7	-13.4	-15.2	-13.2	-11.9	-9.3
Արտահանման աճ, %	23.7	11.3	14.9	-21.8	16.6	12.0	11.7
Ներմուծման աճ, %	26.4	17.0	13.0	-14.7	9.7	8.3	5.1
Դրամական փոխանցումներ	10.2	9.1	8.4	6.9	7.2	7.0	6.7


Բացի տնտեսական աճի վերաբերյալ չափազանց լավատեսական սպասումներից, մակրոտնտեսական կանխատեսումներում առկա են նաև որոշ անհամապատասխանություններ: Մասնավորապես, վերջնական սպառման միջին աճը 2021-2023 թվականներին կանխատեսվել է 4.9%, այն դեպքում երբ վերջին երեք տարիներին՝ 2017-2019 թվականներին, վերջնական սպառման միջին աճը եղել է 9.0%: Փաստաթղթում չի նշվում, թե ինչով է պայմանավորված սպառման աճի տեմպի նվազումը: Միևնույն ժամանակ, հիմնական միջոցներում ներդրումների գծով 2021-2023 թվականներին կանխատեսվել է 6.9% միջին տարեկան աճ, ինչը զգալիորեն ավելի բարձր է նախորդ տարիների աճի համեմատ, և որևէ գործոն նշված չէ, որը նպաստելու է ներդրումների բարձր աճին: Իհարկե, անվիճելի է, որ ներդրումների բարձր աճը կունենա դրական տնտեսական էֆեկտներ, սակայն հաշվի առնելով նախորդ տարիների (հատկապես 2018-2019 թվականների) ցածր ներդրումային ակտիվությունը, անհրաժեշտ է հիմնավորել, թե առաջիկայում ինչ գործոնների ազդեցությամբ է իրավիճակը բարելավվելու:

⁴ Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումները, քանի որ 2019-ից ՀՀ ՎԿ կողմից պաշարների փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվեկշռող գործոն կամ այլ կերպ՝ վիճակագրական սխալները ներառվում են դրա մեջ:

4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ելնելով համավարակի տարածման տեմպից և արդեն իսկ տնտեսության վրա ունեցած ազդեցություններից՝ ՀՀ ՖՆ կողմից գնահատվել է, որ **2020-ին տնտեսական անկման հետևանքով տեղի կունենա հարկային եկամուտների նվազում 2019թ. համեմատ՝ ՀՆԱ-ի շուրջ 0.8 տոկոսի չափով**: Այդպիսով՝ հարկային եկամուտները 2020թ. բյուջեով նախատեսված՝ ՀՆԱ-ի 22.6%-ի փոխարեն կկազմեն 21.5%: Ինչպես տնտեսական աճի, այնպես էլ հարկային եկամուտների դեպքում կանխատեսվել է բավականին արագ վերականգնում 2021-2023 թվականներին: Այսպես, 2021-ին կանխատեսվել է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավում մոտ 0.9 տոկոսային կետով, իսկ հաջորդող երկու տարիներին՝ 0.8 և 0.4 տոկոսային կետ: Հաշվի առնելով, որ հարկեր/ՀՆԱ-ի բարելավման պատմական միջին տեմպը 0.2 տոկոսային կետ է (2010-2019 թվականներին), ապա սա նույնպես չափազանց լավատեսական կանխատեսում է:

Գծապատկեր 2. Հարկային եկամուտների կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում



2020-ին սպասվում է, որ ընթացիկ ծախսերը բյուջեով հաստատվածի նկատմամբ կաճեն՝ պայմանավորված հակաճգնաժամային միջոցառումների⁵ իրականացմամբ: 2019-ի համեմատ ընդհանուր 2020-ին ծախսերը կաճեն ՀՆԱ-ի մոտ 3.6 տոկոսի չափով, իսկ ընթացիկ ծախսերը կաճեն մոտ 3.1 տոկոսային կետով՝ հասնելով ՀՆԱ-ի 25%-ին: **Հատկանշական է, որ ընթացիկ ծախսերի վերաբաշխում կամ կրճատում չի նախատեսվել 2020թ. համար**, չնայած այն հանգամանքին, որ մի շարք ծախսատեսակներ (մի շարք միջոցառումներ, գործուղումներ, պատվիրակությունների ընդունում և այլն) հնարավոր չի լինելու


⁵ Կորոնավիրուսի տնտեսական հետևանքները մեղմելու և արագ վերականգնում ապահովելու նպատակով, կառավարությունը 2020 թվականին իրականացնելու է 150 մլրդ դրամ (ՀՆԱ-ի 2.3%-ի չափով) ընդհանուր գումարի չափով սոցիալ տնտեսական աջակցության միջոցառումների ծրագիր:

իրականացնել համավարակի պատճառով: 2021-2023 թվականներին ընթացիկ ծախսերը լինելու են ավելի մեծ, քան նախատեսված էր նույնիսկ 2020-2022թթ. ՄԺԾԾ-ով:

Պետք է նշել նաև, որ փաստաթղթում առանձին ներդիրով ներկայացվել է կառավարության հակաճգնաժամային միջոցառումների նկարագրությունը: Սա, իհարկե, անհրաժեշտ բաժին է, սակայն պարունակում է միայն արդեն հայտնի տեղեկատվությունը, այսինքն՝ կառավարության հայտարարած 150 մլրդ դրամ աջակցության փաթեթի նկարագրությունը, ինչպես նաև հարկային օրենսդրության շրջանակներում արդեն իրականացված որոշ բարեփոխումները: **Մինչդեռ ապագա տարիներին կառավարության նախատեսած գործողությունների վերաբերյալ ոչ մի խոսք չկա, և անհայտ է, թե ինչպես է կառավարությունը շարունակելու պայքարել ճգնաժամի դեմ, ինչ նոր հարկային և ծախսային միջոցառումներ է պլանավորում իրականացնել և ինչպես է նպաստելու տնտեսության վերականգնման արագացմանը:** Սա լուրջ բացթողում է, քանի որ տնտեսավարողները սպասում են կառավարությունից լսել հստակ ուղերձներ ապագա քաղաքականության վերաբերյալ, որպեսզի կարողանան պլանավորել իրենց գործողությունները և նվազեցնեն ռիսկերը: Իսկ կառավարության «լռությունը» այս առումով մեծացնում է առանց այդ էլ զգալի անորոշությունները:

Կապիտալ ծախսերի դեպքում պատկերը նույնպես մտահոգիչ է: Գծապատկեր 3-ից կարող ենք տեսնել, որ 2020-2022թթ. ՄԺԾԾ-ով, որը մշակվել է 2019թ. առաջին կիսամյակում, նախատեսվել էր բավական հավակնոտ կապիտալ ծախսերի աճ՝ 2020-ին ՀՆԱ-ի մինչև 5.6%-ը, այնուհետև 2022-ին ՀՆԱ-ի 6.7%-ի չափով: Սակայն, տեսնելով փաստացի կատարողականի աննախադեպ ցածր մակարդակը, 2020թ. բյուջեն մշակելիս (2019-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին) կառավարությունը նվազեցրեց կապիտալ ծախսերի կանխատեսվող ծավալը՝ հասցնելով դրանք ՀՆԱ-ի 4.1%-ին 2020 թվականի համար և փոխարենը մեծացրեց ընթացիկ ծախսերի պլանը: 2021-2023թթ. ՄԺԾԾ-ում, կապիտալ ծախսերի մակարդակը ավելի է նվազել՝ 2020թ. հասնելով 3.4%-ի:


Գծապատկեր 3. Պետական բյուջեի ծախսերի կանխատեսումների համեմատականը



Միջնաժամկետում նախատեսվել է կապիտալ ծախսերի բավական դանդաղ աճ՝ 2023-ի համար հասցնելով 4.7%-ի, որն ավելի ցածր է քան 2020-ի համար մեկ տարի առաջ ծրագրված ցուցանիշը:

Հարկային եկամուտների նվազման և ծախսերի աճի արդյունքում, 2020թ. պետական բյուջեի պակասուրդը կլինի ավելի մեծ քան նախատեսվել էր 2020թ. բյուջեի մասին օրենքով՝ կազմելով ՀՆԱ-ի շուրջ 5.6 տոկոսը, իսկ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կունենա կտրուկ աճ՝ բյուջեով նախատեսված ցուցանիշի նկատմամբ 10.4 տոկոսային կետով, 2019-ի նկատմամբ՝ 8.7 տոկոսային կետով և կկազմի շուրջ 58.6 տոկոս:

Գծապատկեր 4. Պետական բյուջեի պակասուրդի և կառավարության պարտքի կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում



Նկատենք, որ 2020թ. սպասվող պակասորդը լինելու է ավելի մեծ, քան կապիտալ ծախսերն են (5.6%՝ 3.4%-ի համեմատ), ինչը հակասում է նոր հարկաբյուջետային կանոններին: Այդ պատճառով, **կառավարությունը 2020-ի տնտեսական անկումը համարել է բացառիկ դեպք** (Բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.3 կետի համապատասխան) և նախատեսել է շեղվել պարտքի և ծախսերի կանոններից: 2021-ից նախատեսվում է վերադարձ հարկաբյուջետային կանոնների պահպանմանը՝ կայունացնելով պետական բյուջեի պակասորդը ՀՆԱ-ի 1.8%-ի շուրջ և նվազեցնելով պարտքի ծավալը 2023-ին մինչև ՀՆԱ-ի 54.7%-ը:

Առաջին անգամ ՄԺԾՓ փաստաթղթում ներկայացվել է կառավարության պարտքի կայունության վերլուծությունը (նախկինում այն հրապարակվում էր որպես առանձին փաստաթուղթ ՄԺԾՓ-ի հրապարակումից հետո): **Ըստ ՀՀ ՖՆ գնահատականների՝ ՀՀ կառավարության պարտքը գնահատվում է կայուն և ցածր ռիսկային՝** շնորհիվ ծրագրված հարկաբյուջետային ճշգրտման: Այնուամենայնիվ, ՀՀ կառավարության պարտքի պորտֆելը շարունակում է մնալ խոցելի՝ պայմանավորված արտարժույթային և ոչ ռեզիդենտների նկատմամբ պարտքի բարձր մասնաբաժիններով: Միևնույն ժամանակ, պարտքը ձևավորող գործոնների պատմական տատանողականությունը և մակրոտնտեսական շրջանակի կանխատեսվող ռիսկերը պարտքի կանխատեսումների համար էական անորոշություններ են ապահովում, ընդ որում՝ ռիսկերի շեղվածությունը պարտքի աճի ուղղությամբ է:

Հարկ է նշել, որ պարտքի կայունության վերլուծությունը նույնպես հիմնված է տնտեսության արագ վերականգնման սցենարի վրա, որտեղ ենթադրվում է բավականին բարձր տնտեսական աճ 2021 և 2022 թվականներին: **Սակայն բացասական ռիսկերի ի հայտ գալու պարագայում (մասնավորապես՝ տնտեսական վերականգնման սպասվածից ավելի դանդաղ ընթանալու պարագայում), կառավարության պարտքի ռիսկայնությունն էապես կաճի՝** վտանգ ստեղծելով, որ պարտքի մակարդակը կարող է գերազանցել ՀՆԱ-ի 70%-ը՝ հասնելով մինչև 78%-ի (այս ռիսկը նշվում է ՀՀ ՖՆ կողմից իրականացված պարտքի կայունության վերլուծությունում):

5. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ 2021-2023 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը կրել է կառուցվածքային մի շարք փոփոխություններ, որոնք դարձնում են այն մի քայլ առաջ նախորդ տարիներին կազմված փաստաթղթերից: Սակայն, ինչպես քաղաքականության, այնպես էլ տնտեսավարողների հետ արդյունավետ հաղորդակցության ապահովման տեսանկյուններից առկա են զգալի

բացթողումներ, որոնք ստվերում են դրական փոփոխությունները: Մասնավորապես.

1. ՄԺԾԾ-ն ընդունվեց առանց հանրային քննարկման: Այսինքն՝ կառավարության անդամները, հեռավար քվեարկելով, ընդունեցին առաջիկա երեք տարիների քաղաքականությունը նախանշող կարևոր փաստաթուղթը: Դրա հիմնական ուղերձները, հարկաբյուջետային քաղաքականության ուղղությունները ոչ մի կերպ չեն ներկայացվել հանրությանը, հետևաբար այդ առումով ծախսողվել է տնտեսավարողների հետ արդյունավետ հաղորդակցության ապահովման գործառույթը, ինչը բավական կարևոր է ճգնաժամային իրավիճակում:

2. Փաստաթղթում ներկայացված չէ, թե ինչ գործողություններ է կառավարությունը պլանավորում իրականացնել միջնաժամկետում՝ ուղղված համավարակի հետևանքների վերացմանը և տնտեսության վերականգնման տեմպի արագացմանը: Դրանց բացակայությունը մեծացնում է անորոշությունները՝ բացասաբար ազդելով տնտեսական ակտիվության վրա:

3. Մակրոտնտեսական կանխատեսումները չափազանց լավատեսական են: Կառավարությունը իր կանխատեսումներում սովորաբար լինում է փոքր-ինչ ավելի պահպանողական, քանի որ դրանց հիման վրա նախատեսվում են ծախսեր, որոնք ընդունված օրենքին համաձայն՝ պետք է կատարվեն: Հետևաբար, եթե ՀՆԱ-ի ծավալը լինի կանխատեսվածից ցածր, ապա կվտանգվի պետական բյուջեի ծախսերի կատարումը: Այժմ այդ ռիսկը մեծ է, քանի որ ըստ ՄԺԾԾ հիմքում դրված կանխատեսումների՝ 2020թ. կլինի -2.5% տնտեսական աճ, իսկ 2021-ին՝ 7.0%: Մինչդեռ, 2020-ի առաջին կիսամյակում արդեն գրանցվել է 4.7% տնտեսական ակտիվության նվազում, այն դեպքում երբ համավարակը դեռևս ակտիվ կերպով տարածվում է:

4. 2021-2023թթ. կանխատեսվել է ներդրումների բավական բարձր՝ մոտ 6.9% միջին տարեկան աճ, սակայն հաշվի առնելով նախորդ տարիների (հատկապես 2018-2019 թվականների) ցածր ներդրումային ակտիվությունը, անհրաժեշտ է հիմնավորել, թե առաջիկայում ինչ գործոնների ազդեցությամբ է իրավիճակը բարելավվելու: Ընդհանուր առմամբ ՄԺԾԾ-ում ներդրումային միջավայրի բարելավման ուղղությամբ նախատեսված միջոցառումները գրեթե բացակայում են, ինչը բացասական ազդակ է ինչպես օտարերկրյա, այնպես էլ ՀՀ ռեզիդենտ ներդրողների համար:

5. Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավման տեմպը նույնպես չափազանց լավատեսական է: 2021-2023 թվականներին նախատեսվել է 0.7 տոկոսային կետ միջին տարեկան բարելավում, այն դեպքում երբ պատմական բարելավման տեմպը եղել է 0.2 տոկոսային կետ: Հետճգնաժամային

իրավիճակում, բարելավման նման տեմպն անհրապարհական է թվում, մանավանդ այն պարագայում, երբ ՄԺԾԾ-ում ներկայացված չէ որևէ միջոցառում, որը կնպաստի հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավմանը:

6. Կապիտալ ծախսերի թերակատարման խնդիրը մնում է չլուծված: Միջնաժամկետի վերջին տարվա՝ 2023-ի համար կառավարությունը նախատեսել է կապիտալ ծախսերի ավելի փոքր մակարդակ (ՀՆԱ-ի նկատմամբ), քան 2019 թվականին ընդունված ՄԺԾԾ-ով նախատեսվել էր 2020 թվականի համար: Սա ցույց է տալիս, որ կապիտալ ծախսերի թերակատարման խնդիրն կառավարությունը դեռևս լուծում չի գտել, և փոխարենը ավելի քիչ կապիտալ ծախս է նախատեսել: Սա նույնպես բացասական ազդակ է առաջիկայում իրականացվելիք քաղաքականության վերաբերյալ, և չի նպաստում տնտեսական աճի երկարաժամկետ տեմպի բարձրացմանը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: